

Պէյրութ, 20 Նոյեմ. 1958

Նորին Սուրբ Օծութիւն

Տ. Տ. Վազգէն Ա.

Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս

Ամենայն Հայոց,

Էջմիածին

Վեհափառ Տէր,

Իմ, մեր կուսակցութեան եւ ամբողջ հակադաշնակ ճակատի մեծագոյն բաղձանքն էր որ Ամենապատիւ Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեան Էջմիածին գար հանդիպելու Ձերդ Վեհափառութեան, զեկուցանելու համար Ձեր մեկնումէն վերջ ստեղծուած կացութիւնը եւ ընդունելու Ձերդ Վեհափառութեան իմաստուն խորհուրդներն ու հրահանգները:

Դրութիւնը շատ լուրջ է, եւ պայքարը, ինչպէս կը նախատեսուի, աւելի քան խիստ պիտի ըլլայ: Այս պայքարին մէջ յաջողելու համար պէտք ունինք նախ մարդերու եւ ապա նիւթական կարելի միջոցներու. ասոնցմէ աւելի սակայն իմաստուն առաջնորդութեան եւ առաջնորդներու:

Մէյս տեսակէտէն Լիդիշէ Սրբազան միակն է որ, տրուած պայմաններուն տակ, կրնար լրացնել այդ մեծագոյն պակասը, իբրեւ ներկայացուցիչ Ձերդ Վեհափառութեան:

Վստահ ենք որ Եղիշէ Սրբազանի այս առաքելութեամբ Ձերդ Վեհափառութիւնը տեղեակ մնալէ յետոյ մեր իրական ու դժուարին կացութեան, պիտի ընէ անհրաժեշտը ապահովելու համար Հայաստանեայց Եկեղեցւոյ յաղթանակը եւ արտասահմանի հայութեան հայրենասիրական ուղղութիւնը:

Ի համբոյր Ձերդ Վեհափառութեան Սուրբ Սջոյն,

Նորին ակնածանքով՝

ԲԱՐՈՒՆԱԿ ԲՈՎՄԱՍԵԱՆ